



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱԾ ՀԱՅՈՒԹ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



Ա. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՍԻՆ ՄԵԶ

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ա. ԾՆՆԴԵԱՆ ԶԵՇՆԱՐԿԸ ՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ՏԱՐԵԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԵԶ

Հայկական մեր Ա. Ծննդեան տօնը մեկն է այն առիթներէն, երբ կ'անդրադառնանք, որ մեր պատմութիւնն ու սեփական մշակոյթը կերտած ենք իբրեւ ինքնուրոյն ժողովուրդ ու ազգութիւն, եղած ենք քրիստոնեութիւնը իբրեւ պետական կրօն ընդունող առաջին ժողովուրդը, զայն միաձուլած ենք մեր հաւաքական կեանքին ու պատմութեան հետ:

Ս. Ծննդեան տօնը, ինչպէս հայկական բոլոր օճախներուն մէջ, Արեւմտեան մեր Թեմը եւս կը տօնակատարէ իւրայատուկ արարողութիւններով ու աւանդական ձեռնարկներով, որոնք կ'անցնին սովորական տօնակատարութիւններէ ու մաղթանքներու փոխանակումն անդին ու մեզ կը կամրջեն մեր դարաւոր ժառանգութիւններուն, Եկեղեցական ու ազգային չմաշող արժեքներուն հետ:

Երկուշաբթի, 5 եւ Երեքշաբթի, 6 Յունուարը այս իմաստով եղան տօնական օրեր: Երկուշաբթի երեկոյ, մեր Թեմի բոլոր Եկեղեցիներուն մէջ տեղի ունեցան ճրագալոյցի արարողութիւն եւ Ս. Պատարագ, իսկ Յունուար 6ին, Ս. Ծննդեան տօնին օրը, ու հակառակ այլապէս աշխատանքի օր մը ըլլալուն, մեր Եկեղեցիներուն կամարներուն տակ հաւատացեալներ գիրար գտան եւ Ս. Պատարագի ու Քրիստոսի մկրտութիւնը խորհրդանշող Զրորինեքի արարողութեանց ընթացքին, հաղորդակից դարձան տօնական մթնոլորտի խորհուրդին: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Սուլշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց եւ ջրօրինեքի արարողութիւն կատարեց Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, ներկայ հաւատացեալներուն աւետելով Աստուածորդույն Ս. Ծնունդը եւ անոր ընկերացող բերկրալի աւետիսները:

### ԱՒԱՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՆ

Նոյն օրը, Երեկոյեան, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Տաճարի «Բաղրամեան» սրահը ժամադրավայրը եղաւ Առաջնորդ Սրբազանին Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան աւանդական ընթրիքին մասնակիցներուն, ձեռնարկ մը՝ որ

Նախընթաց տարիներուն հետեւողութեամբ, իրագործուեցաւ կատարեալ յաջողութեամբ եւ հայկական ցնծալի մթնոլորտի մեջ: Այս տարուան հիւրընկալն էր Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան բարերար ամոլը, որ ճաշկերոյթին հովանաւորութիւնը ստանձնելու կողքին, մեծագումար նուիրատուութիւն մը կատարեց Ազգային Առաջնորդարանի շենքին, հաւատարիմ մնալով նուիրաբերումի իր աւանդութեան եւ գործնապես զօրակցութիւն արտայայտելով Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան:

Ընթրիքի երեկոյին բացումը կատարուեցաւ Առաջնորդ Սրբազն Յօր ու հոգեւորականաց դասուն սրահ մուտքով. մոմեր ի ձեռին, անոնք Թրիստոսի Ս. Ծնունդը Ներկաներուն աւետեցին «Խորհրուդ մեծ եւ սքանչելի» ու «Այսօր տու Է Ս. Ծննդեան» շարականներով: Ներկաները, իրենց կարգին, իրենց ձեռքերուն վառած մոմերով լուսաւորեցին սրահը եւ խորհրդաւոր մթնոլորտի մեջ ծայնակից եղան աւետիսին: Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան ընթերցեց Յիսուսի Ս. Ծննդեան մասին սուրբ գրային հատուածը: Ապա, տեղի ունեցաւ Թաթախի արարողութիւնն ու սեղաններու օրինութիւնը: Ներկաներուն ուշադրութենեն չփրիպեցաւ, որ սեղանները զարդարուած եին թեմիս 35ամեակը խորհրդանշող կեդրոնի զարդերով, որոնք կը կրեին հայկական խորհրդանշներ: Անոնց կողքին, մասնակիցներուն տրամադրութեան տակ դրուած եին յայտագիրգրոյկներ, որոնք կը բովանդակեին երեկոյի հովանաւորներուն ու Ազգ. Առաջնորդարանի նուիրատուներուն անուանացանկերը:

Ընթրիքի Ներկայ եին աւելի քան 600 հիւրեր եւ ազգայիններ, որոնք եկած եին տոհմիկ ու մշակութային մթնոլորտի մեջ զիրար շնորհաւորելու եւ նոր տարուան համար բարեմաղթութիւններ փոխանակելու: Ամիսներ առաջ վերանորոգուած ու նոր փայլը ստացած սրահը, ինքնին, բաժին ունեցաւ ձեռնարկի մթնոլորտին աւելի եւս պայծառացման մեջ:

Յիւրերուն շարքին եին Յայաստանի Յանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմեն Լիլոյեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ Տեարք Խաժակ Տիքինեան եւ Վահե Եագուպեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դոկտ. Վիգեն Յովսեփեան, Կեդրոնական Կոմիտէի անդամներ, Յայ Դատի, ՅՕՍԻ, Յ.Ս.Ը.Ս.Ի. Յամազգայինի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեանց Ներկայացուցիչներ, հայկական միութեանց ու կազմակերպութեանց Ներկայացուցիչներ, Թեմիս Ազգային Վարչութեան, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի, ծխական շրջաններու հոգաբարձութեանց եւ ժողովականութեան Ներկայացուցիչներ, բարերարներ ու Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան լծակից բարեկամներ, ապա նաեւ մամլոյ Ներկայացուցիչներ:

Յանդիսավարն էր Տ. Վազգեն Զիլյ. Աթմաճեան, որ ձեռնիհասօրէն վարեց յայտագիրը՝ իր պաշտօնական արտայայտութիւններու եւ մշակութային-գեղարուեստական բաժիններով: Աև առաջին հերթին բեմ հրաւիրեց Ազգ. Առաջնորդարանի Տիկին Մարիամ Կարապետեանը, որ երեկոյին կազմակերպիչ մարմինին անունով ողջոյնի խօսք արտասանեց ու բարի վայելում մաղթեց Ներկաներուն ու պաշտօնական անձնաւորութիւններուն:

Ողջոյնի ու բարեմաղթութեան խօսք արտասանեց նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան, որ նշեց, թէ Ազգ.

Առաջնորդարանը այս հաստատութիւնն է, որ յատուկ առաքելութեան մը լծուած է մեր ժողովուրդի կեանքին մէջ, առաքելութիւն՝ որուն հանդեպ յանձնառութեան եւ ուխտի վերանորոգման առիթներ են նման հանդիսաւոր երեկոներ: Ան յիշեցուց, որ 21 Դեկտեմբերին, տօնակատարեցինք Յիւսիսային Ամերիկայի Թեմի հաստատման 50րդ ու մեր Թեմի 35րդ տարեդարձները, որոնք նմանապէս ուխտի ու յանձնառութեան վերանորոգումի ու վերահաստատումի առիթ էին: Ան այս առիթով յատկապէս վեր առաւ Ազգային Վարժարաններու առաքելութիւնը եւ Ազգ. Առաջնորդարանի կրթանուեր այլ ծառայութիւնները, յոյս յայտնելով, որ 2009 տարին ըլլայ աշխատանքներն ու նուիրեալ գործունեութիւնը նոյն թափով շարունակելու շրջան մը: Ան շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր զօրակցողներուն եւ յատուկ գնահատանք արձանագրեց Տիկնաև Օժանդակ Մարմինին ու Ազգ. Առաջնորդարանի անձնակազմին: Վերջապէս, Տիար Կտեսապետը յատուկ դրուատիք արտայայտեց Առաջնորդ Սրբազնին՝ բարձր գնահատելով անոր ծառայութիւններն ու նուիրումը, մաղթելով նորանոր նուաճումներ:

## ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻ ՊԱՏԳԱՄ ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԵՆ

Բացման այս հակիրճ խօսքերէն ետք, պաստառի վոյ ցուցադրուեցաւ Մեծի Տան Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին շնորհաւորանքի ու բարեմաղթութեաց պատգամը:

Առաջնորդ Սրբազնին ու անոր շուրջ խմբուած ներկաներուն նոր տարին ու Ս. Ծննդեան տօնը շնորհաւորելու կողքին, Վեհափառ Յայրապետը յատուկ կարեւորութեամբ ծանրացաւ այս տօնին վերանորոգող գործուն մը ըլլալու իւրայատկութեան վրայ: Ան յիշեցուց, որ Աստուածորդուոյն աշխարհ առաքելութեան գլխաւոր նպատակներէն մէկն էր մարդ արարածին կեանքի վերանորոգումը, որպէսզի մարդ ու եկեղեցին վերակառուցուեին: Այդ պատգամը այսօր ալ կը հասնի մարդկութեան, նաեւ մեզի՝ իբրեւ եկեղեցի, ազգ, հայրենիք. կը գտնուինք Բեթղեհեմին արտայայտուած քաղցր հրաւերին ոիմաց, որպէսզի առանց անցեալը մոռնալու՝ մեր անձնական ու հաւաքական կանքները ապրինք վերանորոգումի ու աւելի լաւ կերտելու կամքով, հաւատարմութեամբ: Վեհափառ Յայրապետը այս առիթով կը յիշեցնէր, որ 2009 տարին հոչակած է Երիտասարդութեան տարի, նկատի ունենալով, որ նոր սերունդն ու Երիտասարդութիւնը վերանորոգումի գործուն են, ունին կարողականութիւնը վերանորոգելու մեր կեանքերը: Ան կը յորդորէր մօտենալ Երիտասարդութեան ու զայն բերել մեր հաւաքական կեանքին մէջ, գործնապէս իրականացնելով վերանորոգումի գործընթացը:

## «ԿԸ ՀԱԽՏԱՆՔ ՅՈՅՍԻՆ»

Սրտի խօսք արտասանեց Յայաստանի պետութեան ներկայացուցիչը՝ Տիար Արմեն Լիլոյեան: Ան ներկաներուն ուշադրութեան յանձնեց, որ ամանորի ու տօնական այս օրերու բարեմաղթութիւններն ու

փոխանակուող շնորհաւորանքները բոլորիս կը բերեն լաւին յոյսը, որ հիմնուած է հաւատքի վրայ, յոյսն ու հաւատքը փոխադարձաբար կ'արժեւորեն ու կ'իմաստաւորեն գիրար: Յիշատակելով Եսայի Մարգարի գիրքին մեջ տեղ գտած՝ չարի ու բարի մասին արտայայտութիւնը, ան նշեց, որ այդ խօսքերը պատգամ են մոլութիւններէ ու մոլորութիւններէ հեռու կանգնելու: Ան վեր առաւ դժուարութիւններ յաղթահարելու հայութեան առաքինութիւնը, որուն համար օգտագործուած են հաւատքը, լեզուն, մշակոյթը եւ քրիստոնեական արժեքները: Եղած ենք ու կը մնանք բարեպաշտ ազգ, հաւատքը կը հարստացնէ մեր կեանքը, ու մենք մեր հարուստ ժառանգութիւնները ի սպաս կը դնենք պետութեան կերտումին, շարունակեց հայրենի դիւանագետը, ընդգծելով, որ հայութեան առաքելութիւնն է աւելի ուժեղ կերպով բոլորուիլ եւ զօրակցութիւն տրամադրել պետութեան, որովհետեւ առանց ուժեղ պետութեան, կարելի չէ պաշտպանել մեր հաւատքը ու հաւատքի առարկայ եղող ստորոգելինները:

Ի խօսքի վերջին բաժինով, Տիար Լիլոյեան գոհունակութիւն արտայայտեց, որ եղած է այս գաղութիւն մեջ, աշխատած է բոլորին գործակցութիւնը վայելելով, ակնարկելով, որ երբ նման առաքելութիւն աւարտին հասնի՝ հայրենիք վերադառնալը պատիւ է ու հայրենանուեր աշխատանքի նոր առիթ: Ան այս առիթով շնորհակալութեան խօսք ուղղեց Ազգ. Առաջնորդարանին ու բոլոր գործակցողներուն:

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ընթրիքն առաջ, անոր ընթացքին թէ անկէ ետք, կիրարկուեցաւ գեղարուեստական կոկիկ ու մշակուած յայտագիր մը, որուն մասնակցութիւն բերիս «Տօնական» նուագախումբ՝ ազգային, աշուղական ու ժողովրդային եղանակներու կատարումով: Արմինէ Ներկարարեան ջութակի վրայ կատարեց «Կոռունկ»ը, ապա, ջութակով ընկերացաւ Թևարիկ Ներկարարեանին, որ երգեց ծննդեան երգեր: Թևարիկ Ներկարարեան նաեւ կատարեց մեներգ մը՝ Կոմիտասի յօրինումներէն Ս. Ծննդեան նուիրուած երգ մը, որ ցարդ չէր լսուած մեր բեմերէն: Երեկոյեան յայտնութիւններէն եր պարմանուիի Մելինէ Համբարձումեանը՝ դեռատի երգչուիի մը, որ ներկաները հմայեց «Ով զարմանալի» եւ «Վյոր ծայն հայրական», ապա նաեւ «Գանձեր ունեմ» եւ «Երեւան» երգերով: Գեղարուեստական բաժինին մասնակցութիւն բերին Ազգ. Ալեք Փիլիպոս Վրժ.ի աշակերտներէն Կարէն Արագեան եւ Անի Մնացականեան, որոնք միասնաբար ասմունքեցին Նիկողոս Սարաֆեանէն կտոր մը:

Երաժշտական կատարումներուն դաշնակի վրայ ընկերացաւ բազմավաստակ երաժշտագետ Փռոֆ. Լեւոն Աքրահամեան, որ բաժին ունեցած էր գեղարուեստական այս հատուածներուն պատրաստութեան մեց:

## ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Երեկոյին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան իր խօսքը սկսաւ գնահատելով այս ձեռնարկը կազմակերպողներն ու

յայտագիրին բոլոր մասնակիցները, միաժամանակ դրուատելով հիւրընկալ Եկեղեցւոյ հովիւներն ու ժողովականութիւնը, որոնք յաջողութեամբ իրագործած էին սրահին բարեգարդումը եւ վերանորոգութիւնը:

Առաջնորդ Սրբազնը կարեւորութեամբ անդրադարձաւ Ս. Ծննդեան պատմական իրողութեան ու անոր մարմնաւորած խորհուրդներուն, յիշեցնելով, որ Յիսուսի Ս. Ծնունդին աւետիսը ստացող հովիւներն ու մոգերը այսօր ալ կը հանդիսանան խորհրդանիշներ բարութեան, համեստութեան ու նուիրաբերումի, իսկ մեղապարտ մարդկութեան փրկութեան ի խնդիր աշխարհ առաջուած Աստուածորդին, նմանապէս այսօր կը կանգնի իբրեւ Աստուծոյ սիրոյն ու փրկչագործութեան մարմնաւորումը, մարդկութեան կը բերէ սիրոյ, խաղաղութեան, հաճութեան, համերաշխութեան ու բարիք բաշխելու պատգամները: Ան անդրադարձաւ մերօրեայ մարդկութեան ու աշխարհին վիճակուած այն դառնութիւններուն ու դժուարութիւններուն, որոնք աւարտող տարուան ընթացքին տևական ու ընկերային տագնապներու պատճառ եղան, ու ընդգծեց, որ Ս. Ծնունդի ամենէն յատկանշական պատգամներէն մէկն ալ հաւատքի եւ յոյսի մէջ ամուր մնալն է ու բարիին ու բարեշրջման սպասումի թելադրանքը:

Առաջնորդ Սրբազնը շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք ուղղեց Վեհափառ Յայրապետին, որ ոչ միայն իր սրտառուչ պատգամով, այլ նաեւ հետեւողական թելադրանքներով ու խորհուրդներով կը հանդիսանայ մեր Թեմի աշխատանքներուն ուղեցոյցը: Ան ողջոյնի ու շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ ներկայ պաշտօնական անձնաւորութիւններուն ու կազմակերպութեանց ու միութեանց ներկայացուցիչներուն, Ազգ. Առաջնորդարանի բարերարներուն ու գորակիցներուն, մասնաւորելով Տիար Արմեն Լիլոյեանի գործունեութիւնն ու գործակցական ընթացքը: Առաջնորդ Սրբազնը նկատել տուաւ, որ գլխաւոր հիւպատոսին արտայայտութեան մէջ անուղղակի նշում մը կար, թէ ան ի մօտոյ պիտի աւարտէ Լոս Անձելըսի մէջ իր պաշտօնավարութիւնը ու պիտի վերադառնայ հայրենիք. ան դրուատիքով արտայայտուեցաւ Տիար Լիլոյեանի պաշտօնավարութեան մասին, ընդգծելով, որ ան գործեց իր անձին ու գործին հանդէա վստահութիւն ու սէր ստեղծելով, գործեց հաւատքով ու նուիրումով, հետեւաբար, եթէ ան մեկնի, բոլորիս սիրտերուն ու յուշերուն մէջ պիտի մնայ իբրեւ հայրենանուեր ու ժողովրդանուեր գործիչ, արժանի՝ յաջողութեան անվերապահ մաղթանքներու:

Շարունակելով իր խօսքը, Առաջնորդ Սրբազնը գնահատաքի եւ շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց օրուան հիւրընկալ ամոլիխ՝ Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի բազմամեայ բարերարներէն՝ Տիկին Թիևա Գարուանին ու Գարուան Ըստանիքի Յիմսարկութեան, որոնք այս տարի եւս իշխանական նուիրատուութեամբ մը գործնական գորակցութիւն արտայայտած են Առաջնորդարանիս առաքելութեան ու գործունեութեան, ինչպէս նաեւ հովանաւորեցին Թեմիս 35ամեակի հանդիսութիւնը՝ 21 Դեկտեմբեր 2008ին: Առաջնորդ Սրբազնը շնորհակալութեան ու երախտագիտութեան արտայայտութիւններով յիշատակեց Լինսի Յիմսարկութիւնը, որ այս տարի անսախընթաց նուիրատուութեամբ մը գորակցած է Ազգ. Վարժարաններու

առաքելութեան. Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը սրտի գոհունակութեամբ յայտարարեց, որ գաղութիս բարերարներէն Փրոֆ. Եւ Տիկին Յարութ Եւ Թամար Պարսամեան ամոլը պատկառելի նուիրատուութեամբ մը Ազգ. Առաջնորդարանի հովանիկին տակ կը հաստատեն կրթական նոր հիմնադրամ մը, որ պիտի կոչուի Prof. Harut Barsamian Disabled Armenian Students Scholarship Fund. այս հիմնադրամը պիտի ուժանայ ի մօտոյ, որովհետեւ բարերարը որոշած է իր կազմած յուշերու հատորին հասյթը յատկացնել այս հիմնադրամին:

Իր խօսքին յաջորդ բաժինով, Առաջնորդ Սրբազանը սեղմ կերպով անդրադարձաւ Ազգ. Առաջնորդորդարանի յարկին ու հովանիկին տակ տարուող բազմաճիւղ աշխատանքներուն, որոնք կը տարածուին Երիտասարդութեան, կիրակնօրեայ դպրոցներու, Ս. Գրային սերտողութեանց աշխատանքներուն ու նման ծառայութիւններու վրայ: Ան այս առիթով խօսեցաւ նաեւ աւարտող տարուան կարգ մը պատմական հանգրուաններուն մասին, ինչպէս՝ Անթիլիասի Մայրավանք իր այցելութիւնները՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ուխտի Օրուան, Միւռոնօրինեքին ու Ազգ. Ընդհանուր Ժողովին առիթներով: Ան անդրադարձաւ Վեհափառ Յայրապետի շքախումբին հետ Վատիկան այցելութեան ու մեր Եկեղեցւոյ ու Ս. Աթոռի ազգային ու միջ-Եկեղեցական դերակատարութեանց մասին: Յիշեցնելով, որ Վեհափառ Յայրապետը 2009 տարին նուիրած է մեր Երիտասարդութեան՝ Առաջնորդ Սրբազանը հաստատեց, որ այս նպատակով յատուկ աշխատանք պիտի տարուի յառաջիկայ ամիսներուն, ինչպէս որ կատարուեցաւ 2008ին, որ նուիրուած էր Քրիստոնեական դաստիարակութեան, եւ իբրեւ շօշափելի օրինակ՝ նշեց, որ այսօրուան յայտագիրին մէջ Երիտասարդներուն վերապահուած բաժինը նախերգանքն է առաջադրուած գործին:

Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Յիւսիսային Ամերիկայի Թեմի 50ամեակի ու մեր Թեմի 35ամեակի յոթելենական հանգրուանը, Նշելով, որ անցեալ 35 տարիներու պատմութիւնը վկայութիւն է այս առաքելութեան, որ ի գործ դրուած է ի սպաս մեր Եկեղեցւոյ, Ժողովուրդին, նոր սերունդներուն ու հայրենիքին: Ան հաստատեց, որ այդ հանգրուանը ուխտի ու յանձնառութեան վերանորոգումի, ինչպէս նաեւ ծառայութեան դաշտերը ընդարձակելու առիթ է, եւ իբրեւ գործնական ապացոյց՝ յայտնեց, որ նոյն առաւօտուն, Նորթ Յոլիկուտի մէջ նոր հաստատուած ծխական համայնքը ուսեցաւ իր անդրանիկ Ս. Պատարագը ու յառաջիկային պիտի ծեռնակրէ կազմակերպչական ու կազմաւորման ամբողջացումի քայլերուն: «Այս բոլորը, ըսաւ Առաջնորդ Սրբազանը, կ'իրագործուին գործակցութեամբ, նուիրաբերումնիվ, ծեռք ծեռքի տալով, գիրար ամբողջացնող գործերով», որուն համար, ան շնորհակալութեան խօսք ուղղեց մեր բոլոր միութիւններուն, կազմակերպութիւններուն, կրթանուէր ծառայութեան մարգի սպասարկուներուն ու Ազգ. Առաջնորդարանի բարերարներուն, բարեկամներուն ու Ժողովուրդին, որոնցմէ իւրաքանչիւրին ներդրումն ու մասնակցութիւնը անփոխարինելի են ու կենսական:

Իր պատգամի աւատին, Առաջնորդ Սրբազանը մէջբերում մը կատարեց Պոլսոյ Գարեգին Արք. Տրապիզոնի Պատրիարքի մէկ նորիրդածութենէն, որ կը մեկնաբանէ Քրիստոսի Ս. Ծննդեան ու Մսուրին

խորհուրդը, վեր կ'առնուի Աստուած-մարդ Եղբայրացումի գաղափարը, ուր մարդուն կը թելադրուի Եղբօր Վերաբերմունք ցուցաբերել մինչեւ անգամ թշնամիին հանդեպ, ինչպէս կը պատգամէ քրիստոնէական մեր հաւատքը: «Ուրեմն, Եկեղ, 2009 տարին սկսինք այս կամքով, այս պատրաստակամութեամբ Եւ անցեալի իրագործումները նորերով հարստացնելու ձգումով: Ու Վստահ Եղեք, որ Աստուած ու մեր ժողովուրդը պիտի գնահատեն մեզ, մեզի հետ պիտի ըլլան մեր իւրաքանչիւր քայլափոխին, մեզ առաջնորդելով Եկեղեցաշեն, ազգանուեր ու հայրենանուեր իրագործումներու», Եզրափակեց Առաջնորդ Սրբազնը:

Պահպանիչն ետք, Առաջնորդ Սրբազնը յայտարարեց Վերջին անակնկալ մը. ան կրկին անգամ գնահատանքով արտայայտուեցաւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնաց Օժանդակ արմինի նուիրաբերումին ու ծառայութեանց համար, որոնք կը տարածուին, այս ձեռնարկին կողքին՝ Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տեղի ունեցող այլաբնոյթ ձեռնարկներու վրայ: Ան յայտնեց, որ Տիկնաց Օժանդակ Մարմինը, իր կազմակերպած ձեռնարկներէն ապահոված հասոյթէն, թեմիս 35րդ տարեդարձը խորհրդանշող պատկառելի փոխանցում մը կը կատարէ Ազգ. Առաջնորդարանին՝ իբրեւ յաւելեալ զօրակցութիւն անոր առաքելութեան:

Աւարտին, Ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիլա»ն ու «Ի վեհ բարձանց»ը:

Երեկոյին պաշտօնական բաժինը վերջ գտած էր: Մասնակիցները մտերմիկ պահ մը բոլորեցին սրահին մեջ ու նոր տարուան համար բարեմաղթութիւններ փոխանակելէ ետք, տուն գացին գեղեցիկ երեկոյի մը յիշատակները տանելով իրեւ հետ:

## GREAT SHOW OF SUPPORT AT THE PRELATE'S TRADITIONAL NEW YEAR AND CHRISTMAS DINNER

The Feast of the Birth and Theophany of our Lord Jesus Christ was ceremoniously celebrated by Armenians worldwide on Tuesday, January 6<sup>th</sup>, 2009. The celebration of the Feast began on Monday, January 5<sup>th</sup>, Christmas Eve, with Divine Liturgy celebrated in all Prelacy Churches and continued on January 6<sup>th</sup>, with Divine Liturgy the blessing of water. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and conducted the blessing of water ceremony at St. Mary's Church in Glendale.

In the evening, hundreds of Prelacy supporters and friends gathered at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello for the Prelate's traditional New Year and Christmas Dinner. This year's hosts were Prelacy benefactors Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian who additionally made a generous donation to the Prelacy building.

The evening officially began with the entrance of the Prelate and clergy members into the hall, candles in hand and with the singing of Christmas hymns, followed by the Prelate's invocation.

Among the over six hundred guests in attendance was the Consul General of Armenia the Honorable Armen Liloyan, Central Executive members Mrs. Khajag Dikijian and Mr. Vahe Yacoubian, ARF Bureau member Dr. Viken Hovsepian, ARF Central Committee members, Executive Council members, representatives from the ANC, ARS, Homementmen, and Hamazkayin, Board of Regents and principals, Boards of Trustees and parish members, media, sponsors and friends.

Following his welcoming remarks, Master of Ceremonies Rev. Fr. Vazken Atmajian invited Ladies Auxiliary Chairlady Ms. Mariam Karapetian to deliver her remarks, who on behalf of the Ladies Auxiliary welcomed the guests. In his welcoming remarks, Executive Council Chair Dr. Garo Agopian emphasized that the Prelacy has a vital mission and events such as the traditional dinner offer a unique opportunity for us all to renew our allegiance to that mission. He expressed hope that the work of the Prelacy will continue to thrive in 2009, thanked all the supporters, and wished the Prelate further successes in the coming year.

The taped message of H.H. Catholicos Aram I was then presented to the guests, in which His Holiness congratulated the Prelate and guests on the occasion of the New Year and Christmas. His Holiness focused on the theme of renewal as we celebrate Christmas, reminding the faithful that the purpose of the Jesus' mission on earth was the renewal of mankind and that the message of renewal is a timeless one that applies to our lives today. His Holiness concluded by reiterating that 2009 has been designated as the Year of the Youth, emphasizing the importance of youth involvement in the renewal of our church and community.

Consul General Armen Liloyan was then invited to convey his thoughts. Consul General Liloyan expressed that the New Year and Christmas is a time for faith and hope. He stated that the Armenian people have always been able to overcome hardships because of our faith and Christian values. He continued, "Our lives are enriched by our faith, which in turn allows us to better serve our nation and republic, and a strong republic is needed to preserve our faith and heritage." Consul General Liloyan concluded by expressing his appreciation for the opportunity to serve in this community and stated that upon his return to Armenia at the end of his term, he will be met with new endeavors and opportunities to continue his service to the Armenian people.

The evening also included an artistic program which was comprised of musical performances and recitation. Prior to and during dinner, instrumental renditions of traditional songs were performed by the "Donagan" band. The artistic program also included a solo violin performance by Armine Nergararian, a duet with her sister and singer Knarig Nergararian, and a solo performance by Knarig. The highlight of the program was soprano Meline Hampartsoumian who astounded the guests with her performance. A poem recited by Rose and Alex Pilipos 10<sup>th</sup> grade students Garen Arabian and Ani Mnatsaganian completed the artistic portion. The singers were accompanied on the piano by the renowned Professor Levon Aprahamian.

The evening concluded with the Prelate's closing remarks. The Prelate began by first commending the organizers of the dinner, the participants of the artistic program, and the host parish. He spoke of the love, peace, goodwill, and harmony that the Feast of the Birth and Theophany symbolizes, the goodness, humility, and devotion expressed during the Nativity, and the incarnation of Jesus as the epitome of God's love and mercy towards mankind. The Prelate noted that though the past year was a difficult one due to the economic crisis, the celebration of Christmas reminds us to be hopeful and optimistic.

The Prelate expressed his thanks to His Holiness for his paternal blessings and constant care and guidance, and thanked all the official guests present. In addressing Consul General Armen Liloyan, the Prelate commended his efforts during his term in Los Angeles and wished success in his future endeavors as his term nears its end.

The Prelate had a special word of thanks for the evening's hosts Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian as well as for Ms. Tina Carolan and the Carolan Family Foundation for sponsoring the 35<sup>th</sup> anniversary celebration and their generous donation of various religious publications. He also expressed his appreciation and thanks to the Lincy Foundation for their unprecedented donation to Prelacy Schools in the past year. His Eminence made a special announcement regarding a recent donation made by Professor and Mrs. Harut and Tamar Barsamian to establish the Harut Barsamian Disabled Armenian Students Scholarship Fund. Professor Barsamian is currently publishing his memoirs, the proceeds of which will be allocated to the fund established in his name.

The Prelate then presented some of the highlights of the past year which included visits to the Catholicosate in Antelias for the feast of St. Gregory the Illuminator, the blessing of Holy Muron, the General Assembly, and accompanying the entourage of His Holiness on an official visit to the Vatican to meet with H.H. Pope Benedict XVI. He asserted that in the coming months special focus will be given to youth activities in response to His Holiness proclaiming 2009 as the Year of the Youth. The Prelate turned his attention to the 50<sup>th</sup> anniversary of the North American Prelacy and the 35<sup>th</sup> anniversary of the Western Prelacy, milestones that were recently celebrated and which kicked off the expansion of our endeavors and mission, among them the establishment of a new parish in North Hollywood where Divine Liturgy was celebrated for the first time on Christmas day.

The Prelate concluded by thanking all the individuals and organizations for their continued support, encouragement, and collaboration, urging all to begin the New Year with the same will and determination and look to reaching new heights in our service to our church and community. He once again commended the Ladies Auxiliary for their diligence and dedication in organizing not only this particular event but various events throughout the year.

After concluding his message the Prelate had another surprise announcement, that the Ladies Auxiliary was donating a sum corresponding to

the 35<sup>th</sup> anniversary of the Prelacy, for which he expressed his deep thanks and appreciation.

The evening came to a close with the singing of the Pontifical and Cilician anthems.